ԽՐԱԽՈՒՍՄԱՆ «ԺԵՏՈՆԱՅԻՆ» ՀԱՄԱԿԱՐԳ

Երեխային շահագրգռելու և դրական վարքը ամրապնդելու համար կարելի է օգտագործել «ժետոնային» համակարգ, որի հիմնական բաղադրիչն է իր համար շոշափելի, արժեք ներկայացնող «ժետոն» տալը: Այս համակարգը կարող է աշխատել և՛ որպես անմիջական վարձատրության, և՛ որպես «ժետոնների» կուտակման և փոխանակման համար: Երեխան կուտակում է «ժետոններ» և անհրաժեշտ քանակը հավաքելուց հետո փոխանակում իր համար ցանկալի առարկայի կամ գործողության հետ: Այս համակարգը օգտագործելիս անհարժեշտ է հաշվի առնել ստորև նշված տարրերը.

- Ցանկալի վարք
- Մեծ թվով պարգևներ
- Սահմանել «ժետոնի» ձևը (բալային համակարգ, իրական ժետոններ, փոքրիկ քարտեր)
- Որոշել, թե ինչպես են ժետոնները բաշխվում
- Որքան «ժետոն» կարելի է վաստակել ցանկալի վարք դրսևորելու դեպքում
- Քանի «ժետոն» է անհրաժեշտ ցանկալի

Այս համակարգը ճկուն է և գործուն: Կարելի է օգտագործել տարբեր խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատանքում, իսկ որոշ խնդիրների դեպքում սա կարող է լինել աշխատանք կազմակերպելու միակ հնարավոր տարբերակը: Այս համակարգի միջոցով երեխան սովորում է սպասել: «Ժետոնային» համակարգը երեխայի համար տեսանելի է դարձնում այն խրախուսանքը, ինչի համար երեխան աշխատում է՝ կառավարելով վարքը: Այս համակարգը վարքի կառավարման միջոց է, որն ուղղված է ամրապնդելու դրական վարքը և նվազեցնելու անցանակլի վարքը: Երեխան անմիջապես ստանում է «ժետոն» ցանկալի վարք/առաջադրանք կատարելուց հետո: Այս համակարգը թույլ է տալիս պարգևատրել հաջողությունները: Ստորև ներկայացվում է «ժետոնային» համակարգի իրականացման մեկ օրինակ:





Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիա
Լիլիթ Գրիգորյան

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: